Արձանագրություն N 3

ՀՀ Ազգային ժողովի կարիքների համար ձմեռային անվադողերի ձեռքբերման նպատակով կազմակերպված
ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-24/31 ծածկագրով գնման ընթացակարգի
/այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

13 սեպտեմբերի 2024թ.
ժամը՝ 10:00

ք. Երևան, Բաղրամյան 19

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամներ՝ Վ.Թորոսյան, Գ.Հարությունյան, Հ.Հարությունյան, Ա.Լալայան

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Սաղաթելյան

1. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ /հայտում առկա փաստաթղթեր, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրեր/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և հայտի գնահատման մասին

Նիստը վերսկսվեց 13.09.2024թ. ժամը 10:00-ին: Հանձնաժողովն արձանագրեց, որ «Արպանիվ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկումները կատարել է մասնակի, մասնավորապես՝ Հանձնաժողովն արձանագրել էր նաև, որ eauction.armeps.am համակարգ մուտքագրված /լրացված/ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժնում «բեռնվածության ինդեքսը», «երաշխիքային ժամկետը» հատկանիշներում՝ ապրանքի նկարագրում առկա է «առնվազն» բնութագրիչը, մինչդեռ անհրաժեշտ է հստակ նշել առաջարկվող ապրանքի հատկանիշները, սակայն մասնակցի կողմից «բեռնվածության ինդեքսը» 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժնում չի շտկվել: Հանձնաժողովը որոշեց, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով, «Արպանիվ» ՍՊԸ -ի հայտը գնահատել անբավարար և այն մերժել:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տեղեկություն մերժված հայտի, ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ

13.09.2024 թ.-ին Հանձնաժողովը որոշեց՝

2.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ Ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած՝ համաձայն «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի:

2.2 Հաստատել ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-24/31 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը:

2.3 Անգործության ժամկետ է սահմանվում Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Վարդան Հարությունյան

անդամներ՝ _____ Վարդան Թորոսյան

_____ Գարիկ Հարությունյան

_____ Հրայր Հարությունյան

_____ Անժելա Լալայան

քարտուղար՝ _____ Հերմինե Սաղաթելյան